Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-1082[1]-21.05.2025-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 25.1-ին հոդվածի 2-րդ մասում «վարելու իրավունքի վարորդական վկայական» բառերից հետո լրացնել «(այդ թվում՝ թվային)» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 128-րդ հոդվածը լրացնել 10-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10. Սույն հոդվածի իմաստով վարորդական վկայական է համարվում նաև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից հատկացված վարորդական վկայականի թվային տարբերակը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից: